ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

20 04 19-Ն
«------» ---------- 2012թ. Թիվ ----------

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. մարտի 29-ի թիվ 362-Ն որոշումը՝ Արտաշատ լճի, նրա շրջակա տարածքի էկոլոգիական բարելավման ուղղությամբ և համաձայն „Բյուջետային համակարգի մասին„ ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, 28-րդ հոդվածի.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել համայնքի 2012թ. ֆոնդային բյուջեի եկամտային մասն ավելացնել 40267200 /քառասուն միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր /դրամով, որպես սուբվենցիա և այն ուղղել 05.04.01.51. գործառական դասակարգման 5113 հոդվածին՝ Արտաշատի քաղաքային լճի վերակառուցման և շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքներ կատարելու համար:

Նազարյան Հերիքնազ
Հովհաննիսյան Վազգեն
Մնացականյան Հարությունը
Ենոքյան Ռաֆիկ
Դերմոյան Արման
Բենիամինյան Կարեն
Գևորգյան Գեղամ
Վարդանյան Ռազմիկ
Հովհաննիսյան Ներսիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

20 04 20
«------» ---------- 2012թ. Թիվ ----------

„ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՃԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ„ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

2011թ. աշնանը սկսվել և շարունակվում է Արտաշատի քաղաքային լճի վերակառուցման և շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքները՝ 235 մլն. նախահաշվային արժեքով, 185 մլն. դրամը իրականացվում է ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից, պետական պահուստային միջոցների հաշվին, իսկ 50 մլն-ը նախատեսվում է կատարել Արտաշատի քաղաքապետարանի միջոցով ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված սուբվենցիայի միջոցների հաշվին:

2012թ. ապրիլի 12-ին ՀՀ բնապահպանության նախարարության և Արտաշատի քաղաքապետարանի միջև կնքվել է ՄՎ-14 պայմանագիրը, որի հիման վրա Արտաշատի քաղաքապետարանը պարտավորվել է կատարել լճի լուսավորության, խորքային պոմպի և պոմպակայանի մոնտաժման, ծառատնկման, կանաչապատման և այլ աշխատանքները: Լճի վերակառուցման և շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքները, ըստ ժամանակացույցի պետք է ավարտվեն 2012թ. հունիսի 1-ին:

Քանի որ քաղաքապետարանի կողմից նախագծով նախատեսված աշխատանքների կատարման համար մնացել է կարճ ժամանակահատված և գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, ուստի գնման ենթակա աշխատանքների ձեռք բերումը հնարավոր է միայն մեկ գնման ընթացակարգի միջոցով:

Ելնելով վերոհիշյալից.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝
---

1. Թույլատրել Արտաշատի քաղաքային լճի վերակառուցման և շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքների գնումը կատարել մեկ գնման ընթացակարգի միջոցով:
2. Ուժը կորցրած ճանաչել Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու 30.11.2011թ. թիվ 84 որոշումը:

Նազարյան Հերիքնազ

Հովհաննիսյան Վազգեն

Մնացականյան Հարություն

Ենոքյան Ռաֆիկ

Դերմոյան Արման

Բենիամինյան Կարեն

Գևորգյան Գեղամ

Վարդանյան Ռազմիկ

Հովհաննիսյան Ներսիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ